ԽՈՍՐՈՎ ՄԵԾ-ՏՐԴԱՏ II-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ

Հայ պատմագիտության մեջ կարծիքներ կան, թե III դարում տեղի ունեցած հայ-պարսկական կռիվներից հետո պարտված Խոսրով Մեծ-Տրդատ II հայոց թագավորը մոտավորապես 252/253 թ. հեռացել է իր երկրից և կյանքի վերջին օրերն անցկացրել նրա սահմաններից դուրս։ Դրանք հիմնված են բացառապես XII դարի բյուզանդական պատմիչ Զոնարասի մի հաղորդման վրա, որի համաձայն հռոմեական կայսր Գալլոսի ժամանակ (251—253 թթ.) «սկսվեցին պարսիկների խլրտումները և նրանք նվաճեցին Հայաստանը. այս երկրի Տրդատ թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին պարսից կողմերը»[1]։ Եվ քանի որ պատմիչի հաղորդումից անհայտ է մնում հայոց թագավորի փախուստի վայրը, ուստի ուսումնասիրողները փորձել են իրենք որոշել այն ու հայտնել են կարծիքներ, որոնցից մեկի համաձայն նա իբր փախել է հռոմայեցիների մոտ[2], իսկ ըստ մյուսի՝ ավելի սաուլդ վայր՝ Արևմտյան կամ Հռոմեական Հայաստանի Զրմես ավանը[3]։ Եվ դա նույնիսկ այն դեպքում, երբ նշված կարծիքների հեղինակներին հայտնի էր այն փաստը, որ Տրդատ II-ի (216—256 թթ.) գործունեությունը աղբյուրներում վերագրվել է նրա հորը՝ Խոսրով թագավորին (198—216 թթ.) և նա հայ մատենագրության մեջ հանդես է եկել վերջին անվամբ։ Իսկ աղբյուրներն այս Խոսրովի, որ նույնն է թե Տրդատ II-ի փախուստի ու վախճանի տեղ ցույց են տալիս բոլորովին այլ վայրեր։

Պարսկաստանում Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր I-ի (227—243 թթ.) դեմ Խոսրով Մեծ-Տրդատ II-ի մղած 11-ամյա հաղթական կռիվները՝ թեև թույլ չտվեցին Հայաստանը նվաճելու, բայց և Սասանյաններին էլ չստիպեցին հրաժարվելու իրենց այդ ծրագրից։ Հայաստանը նվա-

---

1 Հղումը տե՛ս Հ. Մանանդյան, երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 88—89։

2 Նույն տեղում, էջ 88։

3 Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 40։

4 Պարթևքի վերջին թագավոր Արտավան V-ի սպանությունից և այնտեղ Սասանյան հարստության հաստատումից հետո, Խոսրով Մեծ-Տրդատ II հայոց թագավորը որպես Արշակունի, դուրս է գալիս իր տոհմակցի վրեժը լուծելու և իր ու իրեն հարևան երկրներից՝ Վիրքից, Աղվանքից ու կովկասյան այլևայլ ցեղերից կազմելով մի մեծ բանակ, մարտի կոչելով նաև մյուս Արշակունի թագավորներին (Ագաթանգեղայ, Պատմութիւն Հայոց, Երևան, 1983, § 19, 20, Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, գիրք Բ, գլ. ԼԲ, ԼԳ, Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 70 տասնմեկ տարի շարունակ (Ագաթանգեղոս, § 23, Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 66—67) համառ ու անդիջում կռիվներ էր մղում նոր հարստության հիմնադիր Արտաշիրի դեմ։ Կռիվների տասնմեկամյա տևողությունը պատմագրությունն ընդունում է որպես արժանահավատ իրականություն։ Բայց ահա տարակարծություններ կան դրանք ընդգրկած ժամանակաշրջանի հարցում։ Առաջարկվել են 228—238, 238—248, 242—252 թթ. (Հ. Մանանդյան, երկեր, հ. Բ, էջ 92, 245—256 թթ.), (Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 37)։ Բայց եթե պատմագիտությունը Արտավանի սպանության ու Արտաշիրի թագադրության տարին համարում է 227 թ., իսկ ըստ Ագաթանգեղոսի հայոց թագավորն այդ դեպքերին հաջորդող տարում (§ 19) է սկսում իր կռիվները, ապա տրամաբանական ու իրավացի կլինի այդ տասնմեկամյա շրջանը համարել 228—237/8 թթ.։

ճելու նկրտումները պարսից արքունիքում նոր ուժով բռնկվեցին Արտաշիրի որդու և հաջորդի՝ Շապուհ I-ի (243—271 թթ.) օրոք, որը պարսկական տերության հետ ժառանգել էր նաև հոր նվաճողական քաղաքականությունը։ Սրա թագավորության հենց սկզբից վերսկսվում են Հռոմեական կայսրության ասիական մասին տիրելու համար դեռևս Արտաշիրի ժամանակներից մղվող պարսկա-հռոմեական կռիվները, որոնց ժամանակ Հայաստանը շարունակում էր հանդես գալ որպես Հռոմի դաշնակից։ Ռազմական գործողությունները նախապես ծավալվում են հօգուտ հռոմեացիների։ Սակայն 244 թ. Մեսիխես վայրում տեղի ունեցած ճակատամարտում կրած խայտառակ պարտությունից հետո սպանված Գորդիանոս կայսրին փոխարինած Մարկոս Հուլիոս Փիլիպպոսը (244—249 թթ.) վճարելով 500 հազար դինար ռազմատուգանք, 244 թ. խաղաղության դաշն է կնքում և պարսիկներին զիջում Միջագետքն ու Հայաստանը կամ նրա մեծ մասը։ Ուսումնասիրողները տարբեր կերպ են մեկնաբանել պարսկա-հռոմեական հիշյալ պայմանագրի Հայաստանին վերաբերող կետը։ Նրանցից ոմանք գտնում են, որ խաղաղության այդ պայմանագիրը չի գործել և մնացել է թղթի վրա, ոմանք էլ ենթադրում են, որ պարսիկներին զիջելով Հայաստանի մեծ մասը, հռոմեացիները, այնուամենայնիվ, իրենց ձեռքում են պահել Փոքր Հայքը, իսկ մյուսներն էլ ընդունելով հանդերձ, որ վերջինս մնացել է հռոմեացիների ձեռքում, ժխտում են ընդհանրապես մնացած Հայաստանը պարսիկներին զիջելու փաստը[5]։ Սակայն մենք գտնում ենք, որ հռոմեական պատմիչների կողմից իսկ «ամենասմոթաբեր»[6] որակվող այս պայմանագրի Հայաստանին վերաբերող կետը պետք է հասկանալ այնպես, որ Հռոմը հրաժարվում էր Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալուց և ազատ թողնում Շապուհի նկրտումների առաջ։ Այդպես կարծելու համար հիմք է տալիս Մովսես Խորենացու մի հաղորդումը, որի համաձայն Մարկոս Հուլիոս Փիլիպպոսին հաջորդում են «Դեկիոս և Գալլոս և Վաղերիանոս կայսերք, որք ոչ օգնեցին նմա»[7], այսինքն Խոսրով Մեծին (իմա՝ Տրդատ II-ին)։ Այսպիսով, Հայաստանը մենակ է մնում Պարսկաստանի դեմ և եթե, ինչպես իրավացիորեն կարծում են ուսումնասիրողները, դրանից հետո էլ չի ենթարկվում Պարսկաստանին[8], ապա միայն իր թագավորի ղեխավորությամբ մղած հերոսական պայքարի շնորհիվ։

Հայաստանի համար ստեղծված քաղաքական այս նոր կացությունը տևում է շուրջ մեկ տասնամյակ, մինչև 253 թ., երբ, հաջողությամբ ավարտելով քուշանների դեմ սկսած պատերազմը, Շապուհ II-ը հարձակվում է Հայաստանի վրա։ Հենց այս հարձակմանն է վերաբերում պատմիչ Զոնարասի վերոբերյալ հաղորդումը։ Տվյալ հարձակման ժամանակ է, որ հոգնատանջ ու այլևս ոչ մի տեղից օգնություն ստանալու հույս չունեցող Հայաստանն անկարող էր դիմադրել և Խոսրով Մեծ-Տրդատ II հայոց թագավորը հարկադրված է լինում, ըստ Զոնարասի, փախչել։

Խոսրով Մեծ-Տրդատ II հայոց թագավորի փախուստով Հայաստանը դեռևս նվաճված չէր։ Տրդատ II-ն էր Սասանյանների ոխերիմ թշնամին և նրանց դեմ պատերազմների անխոնջ կազմակերպիչը։ Ուստի Շապուհ II-ը ձեռնամուխ է լինում նրան նաև ֆիզիկապես վերացնելու գործին և, այդ նպատակով ի դեմս Անակ Պարթևի, մարդասպան է ուղարկում։ Զևացնելով, թե փախչում է Շապուհից[9], Անակ Պարթևը ուղևորվում է հայոց թագավորին սպանելու և դրա համար մեկնում է ոչ թե հռոմեական Հայաստան կամ Զրմես ավան, ուր, եթե հավատալու լինենք ուսումնասիրողներին, հարկ էր, որ գնար, այլ Հայոց հյուսիս-արևելից կողմանք, մասնավորապես

---

5 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 87—88։

6 Նույն տեղում, էջ 87։

7 Խորենացի, Բ, գլ. ՀԴ։

8 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 88, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 36։

9 Խորենացի, Բ, գլ. ՀԴ։

Ուտիք։ «Եկեալ (Անակ Պարթևը—Հ. Ս.),—գրում է Ագաթանգեղոսը,—յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց»[10]։ Ըստ Խորենացու էլ Խոսրով Մեծ-Տրդատ II-ը Անակի գալստյան մասին լսում է «յՈւտեացւոց գաւառին»[11]։

Ուրեմն, Հայաստանի համար ծանր օրերին, հայոց թագավորը ոչ թե փախել էր իր երկրից, ինչպես սխալմամբ կարծել են ուսումնասիրողները, այլ հեռացել էր Հայոց Ուտիք նահանգի Խաղխաղ քաղաք։ Ավելին, աղբյուրների վկայությամբ, նա այստեղ էլ երկար չի մնում և որոշ ժամանակ անց վերադառնում է Վաղարշապատ։ Ագաթանգեղոսի վկայությամբ «իսկ երբ եկին հասին աւուրք ջերմոտ հարաւհողմն գարուն դրանցն բանալոյ՝ համբարձավ թագաւորն ի կողմանցն յայնցանէ. եկին իջին յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք»[12]։ Եվ հենց այստեղ էլ տեղի է ունենում նրա սպանությունը, հակառակ պատմագիտության մեջ առկա կարծիքի, թե այն կատարվել է Զրմեսում[13]։ «Առնոյր (Անակը—Հ. Ս.),—շարունակում է պատմել Ագաթանգեղոսը,—զթագաւորն մեկուսի նա և եղբայրն իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ զբոսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. և զսուսերն պողովատիկս թերաքամեալս ունէին, յանկարծ յեղակարծումս ժամանակի զէնս վերացուցեալ զթագաւորն դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէին»[14]։ Որ հայոց թագավորի սպանությունը տեղի է ունեցել Վաղարշապատում, հաստատվում է նաև նույն հեղինակի անուղղակի վկայությունով։ Ըստ նրա, թագավորի սպանությունից հետո հայ նախարարները Արտաշատի կողմերը փախչող մարդասպանին հետապնդում են Վաղարշապատից դուրս գալով և վերջինիս մոտ եղած կամուրջով անցնելով։ «Անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամորի կոչեն՝ (նախարարները—Հ. Ս.) աճապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատուս»[15],—գրում է Ագաթանգեղոսը։

Խոսրով Մեծ-Տրդատ II-ի սպանությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ նա նախապատրաստվում էր նոր արշավանքի դուրս գալ պարսիկների դեմ՝ «ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակ առնէր՝ անդրէն արշաւել ի կողմանս Պարսից»[16]։ Այս հանգամանքն էր, որ նաև շտապեցրեց Անակին՝ իրագործելու ոճիրը. «Իբրև զայն լսէր Պարթևն՝ զերդումն ուխտին յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր»[17]։ Հովհան Մամիկոնյանն էլ է հաստատում, որ Հայոց թագավորի սպանությունն իրականացվում է, երբ սա «կամէր... արշաւել ի պարսիկս ի գարնանային ժամանակս»[18]։ Աղբյուրների այս հաղորդումներից ելնելով, կարելի է հիմնավորապես պնդել, որ Հայոց թագավորը մեկնել էր Ուտիք՝ նոր զորք գումարելու և Շապուհի հետ իր պայքարը շարունակելու մտադրությամբ։ Մոտ երկու տարի մնալով Ուտիքում[19], նա, իսկապես, կարողացել էր հավաքագրել իրեն անհրաժեշտ քանակությամբ բանակ և վերադառնալով Վաղարշապատ՝ սպասել գարնանը, որի բացվելուն պես նախապատրաստվում է արշավանքի, սակայն եղերական մահը նրան խանգարում է իրագործելու իր ծրագիրը։

---

10 Ագաթանգեղոս, § 28։

11 Խորենացի, Բ, գլ. ՀԴ։

12 Ագաթանգեղոս, § 31։

13 Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 44։

14 Ագաթանգեղոս, § 32։

15 Նույն տեղում, § 33։

16 Նույն տեղում, § 31։

17 Նույն տեղում, § 32։

18 Հովհան Մամիկոնյան, էջ 67։

19 Հայ պատմագիտության մեջ Ուտիքը միշտ ներկայացվել է որպես մի վայր, ուր մեկնել են հայոց թագավորները նոր զորք հավաքագրելու և բանակ կազմելու համար։ Այդ կապակցությամբ հիշենք Երվանդ Սակավակյացի վրա Արտաշես I-ի հարձակման ժամանակ նույն նպատակով աճաջինի Ուտիք գնալու օրինակը (Խորենացի, Բ, գլ. ԽԴ)։

Հայ պատմիչների տեղեկությունների համաձայն, հայոց թագավորի սպանությունը տեղի է ունենում Անակի Հայաստան գալու երրորդ տարում[20], որ ուսումնասիրողների հաշվարկով լինում է 256 թ.[21]։

Խոսրով Մեծ-Տրդատ II հայոց թագավորի սպանության տարեթիվը իրավացիորեն ցույց տալով 256 թ., ուսումնասիրողները, սակայն, գտնում են, որ նա 253 թ. կարծեցյալ փախուստից հետո ընկած վերջին երեք տարում թագավորել է սոսկ Հայաստանի հռոմեական մասում, իսկ մյուս՝ պարսկական մասում իբրև թե նույն՝ 253 թ. սկսած իշխել է նրա ազգականներից մեկը՝ Արտավազդ V-ը[22]։ Բայց նրանք Տրդատի կյանքի ու գործունեության վերջին տարիների մասին ունենալով սխալ պատկերացում, սխալվում են նաև այս հարցում։ Ինչպես բխում է ներկա շարադրանքից, Տրդատ II-ն իր թագավորության ողջ շրջանում եղել է Մեծ Հայաստանի լիիրավ թագավորը և այդպիսին էլ վախճանվել։ Ուստի նրա թագավորության վերջին տարին պետք է համարել ոչ թե 253[23], այլ 256 թ.[24]։ Ասվածի հետևությամբ Արտավազդի թագավորության սկիզբն էլ պետք է հետ բերել մինչև նշված նոր թվականը։

Այսպիսով, Խոսրով Մեծ-Տրդատ II հայոց թագավորը ոչ թե փախել և ապաստան է գտել իր երկրի սահմաններից դուրս, այլ հեռացել է Ուտիք, այնտեղ նոր զորք կազմելու և պայքարը Շապուհ I-ի դեմ շարունակելու համար։ Հանուն հայոց երկրի ազատության ու անկախության նախանձախնդիր անձնավորություն, նա 216 թ. անցնելով իշխանության գլուխ, մինչև 256 թ.՝ մինչև իր վախճանը Վաղարշապատում, անդուլ պատերազմներով ի դերն է հանել Հայաստանը նվաճելու Պարսկաստանի բոլոր փորձերը։ Նրա դավադիր սպանությունից հետո է միայն, որ Շապուհը կարողանում է վերջնականապես նվաճել Հայաստանը։

ПОСЛЕДНИЙ ПЕРИОД ДЕЯТЕЛЬНОСТИ ХОСРОВА ВЕЛИКОГО-ТРДАТА II

Г. С. СВАЗЯН

Резюме

В армянской историографии бытует точка зрения, согласно которой потерпевший поражение в результате армяно-персидских войн III в., армянский царь Хосров Великий-Трдат II приблизительно в 252/3 г. бежал и нашел убежище, согласно одной версии, у римлян, а другой—в местечке Чрмес Западной или Римской Армении, где и был убит.

Однако Хосров Великий-Трдат II не бежал за пределы своей страны, а удалился в Утик с целью набора войска и продолжения войны против Сасанидской Персии. Собрав большое войско, он вернулся в Вагаршапат. Здесь же, при подготовке к походу, в 256 г. был убит присланным Шапуhом I Анаком Партевом.

---

20 Խորենացի, Բ, գլ. ՀԴ, Հովհան Մամիկոնյան, էջ 67։

21 Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 44։

22 Նույն տեղում, էջ 40։

23 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 93։

24 Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունում որպես Տրդատ II-ի թագավորության վերջին տարի նույնպես ցույց է տրված 256 թ. (հ. II, էջ 27 և հաշ.), Եկատի առնելով իբր Հռոմեական Հայաստանում նրա թագավորած երեք տարիները ևս Իսկ ընդհանրապես, որպես Հայաստանի պարսկական մասում նրա թագավորության վերջին տարի է համարվել 253 թ. (էջ 40)։